



Տևողությունը – 150րոպե

12. Առաջնության ընթացքում ֆուտբոլային ակումբի երկու հարձակվողները միասին խփեցին 35 գնդակ և կատարեցին 24 գոլային փոխանցում: Հայտնի է, որ նրանք միմյանց կատարել են 16 գոլային փոխանցումներ: Քանի՞ գոլ է խփվել նրանց մասնակցությամբ, այսինքն՝ գոլեր, որոնք խփվել են նրանց կողմից, կամ նրանց փոխանցումից հետո:


- 1) 24      2) 35      3) 43      4) 59

13. Խաչիկը, Վաչիկն ու Հրաչիկը ունեն խնձորներ: Վաչիկի խնձորները Խաչիկի խնձորների քանակի կրկնակիից 10 հատով ավել են, իսկ Հրաչիկն ունի Վաչիկից երեք անգամ շատ խնձոր: Որքա՞ն խնձոր ունի Վաչիկը, եթե հայտնի է, որ Հրաչիկը Խաչիկից 65 խնձոր ավել ունի:

- 1) 24      2) 42      3) 7      4) այլ արժեք

14. Տան սենյակի անկյունում իրար վրա են շարված նույն չափի խորանարդիկներ՝ ինչպես պատկերված է նկարում: Քանի՞ խորանարդիկ է շարված սենյակի անկյունում:

- 1) 18      2) 19      3) 20      4) այլ արժեք



15. Թվերը բաժանված են եռյակների հետևյալ կերպ՝ (1,2,3) ; (4,5,6); (7,8,9); ... Գտնել 25-րդ փակագծում գրված երեք թվերի գումարը:

- 1) 213      2) 222      3) 231      4) 240

16. Քառակուսիայի հանրագիտարանը բաղկացած է երկու հատորներից, որոնցից յուրաքանչյուրի հաստությունը 9սմ է, ընդ որում, բովանդակության մասի (էջերի) հաստությունը 7սմ է, իսկ դիմացի և հետևի կազմերի հաստությունները 1սմ են: Պահարանում, սովորականի պես, իրար կողքի դրված են հանրագիտարանի առաջին և երկրորդ հատորները: Քանի՞ սմ է հանրագիտարանի առաջին հատորի առաջին էջի և երկրորդ հատորի վերջին էջի միջև եղած հեռավորությունը:

17. Արշակի և Լևոնի ունեցած կոնֆետների քանակը հարաբերում է ինչպես 5:3-ի: Այն բանից հետո, երբ Արշակն իր կոնֆետների կեսը տվեց Լևոնին, Լևոնն ունեցավ Արշակից 18 հատով ավել կոնֆետ: Քանի՞ կոնֆետ ունեին Արշակն ու Լևոնը միասին:

18. Գտնել երկնիշ բնական թվերի քանակը, որոնց թվանշանների արտադրյալը բնական պարզ թիվ է:

19. Արշակը մտապահել է երկնիշ բնական թիվ, որի համար ճիշտ են հետևյալ չորս պնդումներից ճիշտ երեք հատը՝ Ա) այն պարզ թիվ է, Բ) այն գույգ թիվ է, Գ) թվանշաններից մեկը 9 է, Դ) այն բաժանվում է 7-ի: Գտնել Արշակի մտապահած թիվը:

20. Մեծ ուղղանկյունը բաղկացած է 5 հատ միանման փոքր ուղղանկյուններից: Գտնել մեծ ուղղանկյան մակերեսը, եթե հայտնի է, որ նրա պարագիծը հավասար է 48:

